ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...

ՄԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆԱՆՔ

(ըստ Ստեփան Կուրտիկյանի)

Լուսադեմին Զարուհին վեր կացավ, վերցրեց հովվական մահակն ու սրինգը և ճանապարհ ընկավ դեպի Արծվասար:

Այծ և ուլ առաջը գցած՝ մտավ Մթնաձոր, անցավ Բասուտա գետակը, քայլեց ցողաթաթախ խոտերի միջով և քարքարոտ կածաններով վստահ մագլցեց սարն ի վեր: Գեղեցիկ միրհավը տոտիկ-տոտիկ քայլում էր ցողաշաղախ քարերի վրայով:

Այդ պահին մոտալուտ արևածագից պայծառացել էր լեռնակատարը, երբ Զարուհին հասավ Արծվասարի աղբյուրին: Մի պահ հանգիստ առավ, ապա մի քանի ումպ խմեց սառնորակ ջրից և ուժ ստացավ: Այծերն էլ արածում էին ծաղկառատ դաշտում:

Երբ մթնշաղն իր մեջ առավ Արծվասարի կածանն ու ժայռը, աղջիկը, ընդհատելով սրինգի նվագը, ուրախ-ուրախ վերադարձավ տուն:

Այնքան շատ էր այծերի կաթը, որ կիթը մինչև դույլերի բերանը լցրեց ծաղկաբույր կաթով: Եվ լիացավ Հովհաննեսի օջախը:

Կիթն ավարտելուց հետո Էլթանգը, ընդառաջ գնալով, մայրական գիրկն առավ կրտսեր աղջկան և ջերմագորով համբուրեց.

– Ոտդ երբեք քարին չդիպչի, բալե՛ս. Աստված երկա՛ր կյանք տա քեզ:

Մտախոհ Հովհաննեսը ևս հայրաբար օրհնեց աղջկան:

Բառային աշխատանք

1. Կարդա՛ զրույցը և դո՛ւրս գրիր *h* բաղաձայնի ուղղագրությանը վերաբերող բառերը:

2. Դեմ դիմաց գրի՛ր *լուսադեմ*, *քարքարոտ*, *պայծառ*, *արևածագ*, *օրհնել* բառերի հոմանիշները և հականիշները:

Նմուշ՝ քաջ, արի – երկչոտ

3. Տրված բառերից առանձնացրու՛ հոմանշային 6 զույգ:

Խրթին, հարթ, խոնավ, ժողովել, տամուկ, հսկայական, ողորկ, համեստ, դժվար, վիթխարի, հավաքել, դյութիչ, գովել, անպտուղ, ծավի, պարպել, հուզիչ, դրվատել, դատարկել, բիլ:

4. Տեքստից դո՛ւրս գրիր բարդ բառերը և բաժանի՛ր բաղադրիչների:

5. Անհրաժեշտության դեպքում բաց թողնված տառերի տեղում գրի՛ր *h*:

Հով_անը ընդ_ունակ, աշխար_ տեսած մարդ էր: Ապրում էր հայրենիքից հեռու՝ աչքերում կարոտ իր՝ նշխար_ի նման սուրբ հայրենիքի նկատմամբ: Տեսել էր ար_ավիրք, ար_ամար_անք, ան_արգանք, սակայն օր_ասական պա_երին չէր ցուցաբերել հեղ_եղուկ բնավորություն, ընդ_ակառակը, ան_ողդ_ողդ կամք: Ընդ_առաջելով հոր խոր_ոդին՝ բնակություն էր հաստատել լեռնային գյուղում՝ հեղ_եղներից հոկված լերկ ժայռի պռնկին: Անընդհատ աշխատելով՝ հայթ_այթել էր անհրաժեշտը և շնոր_ալի որդիների օգնությամբ տուն կառուցել, այգի գցել:

Տեքստային աշխատանք

1. Ներկայացրու՛ «Մայրական օրհնանք» տեքստի գաղափարը մեկ նախադասությամբ:

2. Գտի՛ր տեքստի բանալի բառերը և դրանցով ստեղծի՛ր պատմություն՝ հաղորդելով սեփական ապրումներդ, զգացողություններդ:

3. Տեքստից դո՛ւրս գրիր մայրական օրհնանքը և մեկնաբանի՛ր իմացածդ օրհնանքները և բարեմաղթանքները:

4. Նկարազարդումներով (ապլիկացիայով, ծեփելով) ներկայացրու՛ թեման՝ հաղորդվող նյութը առավել գրավիչ դարձնելու համար:

5. Մայրդ երբևէ օրհնե՞լ է քեզ: Հիշի՛ր այդ օրհնանքը:

6. Արտահայտի՛ր քո կարծիքը տրված տեքստի վերաբերյալ, դատողություններ՝ արա:

7. Բացատրի՛ր նոր սովորած բառերի իմաստը և այդ բառերով կազմի՛ր թեմային համապատասխան շարադրանք:

8. Նկարը դիտելիս արտահայտի՛ր քո վերաբերմունքը հայրենի բնության, հեղինակի ապրումների, հույզերի ու երազանքների մասին:

1. Ի՞նչ ես տեսնում նկարում: • տեսողական	2. Ի՞նչ ես զգում: • վերաբերմունքային
3. Կապը քո և իրական կյանքի հետ: • առնչություններ	4. Վերնագրի՛ր՝ համապատասխանեցնելով բովանդակությանը:

Հ

1. Հ-ն բառի բոլոր դիրքերում գրվում է այնտեղ, որտեղ արտասանվում է, օրինակ՝ հասկ, հրանոթ, ահռելի, ջրհեղեղ, օրհնանք, ընդհակառակը, ընդհուպ, նախագահ:

2. Հ-ն ր-ից հետո գրվում, բայց թույլ է արտասանվում հետևյալ բառերում՝ աշխարհ, խոնարհ, խորհուրդ, ճանապարհ, շնորհ, ժպիրհ:

3. Հ-ն չի հնչում և չի գրվում նշխար, ապաշխարել, ընդամենը, ընդառաջ, ընդարձակ, ընթանալ և այլ բառերում:

Երկրորդ հ-ն չի հնչում և չի գրվում անհեթեթ, հայթայթել, հեղեղ, հեղեղատ, հեղեղել, անհողդողդ բառերում, որովհետև բառակրկնության ժամանակ երկրորդ արմատի հ հնչյունը ընկել է:

Առաջադրանքներ

1. Ըստ անհրաժեշտության՝ լրացրու *հ* տառը:

Հով_աննես, Բեթ_ովեն, ապաշխար_ել, աշխար_այացք, խոնար_, հայթ_այթել, նշխար_, ընդ_ամենը, հով_ար (գլխարկի), մտա-խո_, հեղ_եղատ, միր_ավ, ընդ_առաջ:

2. Հետևյալ բաղադրիչների միացումով բառեր կազմիր:

Ջուր + *աշխարհ*, *բարի* + *հոգի*, *նուռ* + *հատ*, *ջուր* + *հեղեղ*, *աշ-խարհ* + *զոր*(ք), *ջահ* + *կիր*, *լեհ* + *հայ*, *սահման* + *պահ*:

3. Մեկական նախադասություն կազմիր *հովհար* և *հովար* բառե-րով (օգտվիր բառարանից):

4. Միացրու օրհնանքների սկիզբն ու վերջը:

Ոսկի	կանաչ բուսնի:
Տաշտներդ միշտ հաց լինի,	պայծառ եղիր:
Յոթը որդով	ձեռքեր ունենաս:
Ոտքդ ուր դնես,	սեղան նստես:
Արևի պես	դռներդ միշտ բաց լինի:

5. Լրացրու *հ* տառն այն բառերում, որտեղ անհրաժեշտ է:

Խոնար_, խոր_ուրդ, ընդ_ատել, շնոր_ք, ընդ_ակառակն, ընդ_անուր, հեղ_եղուկ, հեղ_եղատ, հերթապա_, խոր_ին, ճա_ճուտ, հուր_րալ, ներ_ակ, ընդ_ուպ, խոնար_, ար_եստ, ար_ամար_ել, նիր_ել, շնոր_ակալագիր, ընդ_անրացնել, ընդ_ատակ, խոնար_վել, հով_ար, հով_անոց, հայթ_այթել, խոր_ուրդ, ճանապար_, ան_եթեթ, ար_ամար_ել, դազգա_, համ_արզ, հուր_րալ, չմշկասա_ք, օր_ներգ, ճա_ճուտ, ընդ_ար-վել աշխար_ազոր, արգա_ատելի, ընդ_ամենը, թիկնապա_, հոգե_մա, հոտ_ոտել, հրդե_, ար_ավիրք խոր_ել, ընդ_անուր, ապաշխար_ել, աշխար_, ապաշնոր_:

6. Նախորդ առաջադրանքում տրված բառաշարը խմբավորել ըստ հ-ի գրության:

Հ գրվում է՝	Հ չի գրվում՝
խորհուրդ	խորին

7. Բառակազմական վերլուծության ենթարկիր հետևյալ բառերը.

անշնորհք _____ հեղհեղուկ _____

ողջախոհ _____ քարհանք _____

հայթայթել _____ հուրհրալ _____

աշխարհասփյուռ _____ խորհրդածություն_____

8. Կազմել նախադասություններ անհեթեթ արարք, սնունդ հայ-թայթել բառակապակցություններով: